

# HEPATITIS A ՊԱՏՎԱՍ

## Ի՞նչ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ

### 1 Ի՞նչ է Hepatitis A-ն

Hepatitis A-ն (HAV) Hepatitis A վիրուսից առաջացած լյարդի լուրջ հիվանդություն է: HAV-ն գտնվում է Hepatitis A-ով վարակված անհատների կղկղանքում: Այն ընդհանրապես տարածվում է անհատների միջև անմիջական շփումից, եւ երբեմն HAV վիրուս պարունակող սննդամթերքից կամ ջրից օգտվելով:

Hepatitis A-ն կարող է պատճառել.

- Թեթև «հարբուխանման» հիվանդություն
- Դեղնախտ (մաշկի կամ աչքերի դեղնություն)
- Ստամոքսի սուր ցավեր եւ փորհարություն



Hepatitis A-ով վարակված անհատները հաճախ պետք է փոխադրվեն հիվանդանոց (յուրաքանչյուր հինգ անհատներից մեկը):

Երբեմն Hepatitis A-ն մահ է պատճառում (1.000 դեպքերից շուրջ 3-5 մահ):

Hepatitis A-ով վարակված անհատը շատ հեշտությամբ հիւանդությունը կարող է փոխանցել նոյն ընտանիքի այլ անդամներին:

**Hepatitis-A պատվաստը կարող է կանխել Hepatitis A-ն:**

### 2 Ո՞վ պետք է ընդունի Hepatitis A պատվաստ եւ ե՞րբ

Ո՞վ

Որոշ անհատներ պետք է հաճախ Hepatitis-A-ով պատվաստվեն.

- Բոլոր մեկ տարեկան (12-23 ամսական) երեխաները:
- 1 տարեկան եւ ավելի մեծ անհատներ, որոնք ճամփորդում են այնպիսի երկրներ կամ աշխատում են Hepatitis A-ի հաճախակի դեպքեր ունեցող այն երկրներում, որոնք գտնվում են Կենտրոնական կամ Հարավային Ամերիկայում, Կարիբյաններում, Մեքսիկայում, Ասիայում (բացի Ճապոնիայից), Աֆրիկայում եւ Արեւելյան Եվրոպայում: Հավելյալ տեղեկությունների համար տես [www.cdc.gov/travel](http://www.cdc.gov/travel).
- Երեխաներ կամ 18 տարեկանից վեր չափահասներ, որոնք ապրում են այն նահանգներում կամ համայնքներում, որտեղ հաճախակի պատվաստում է հանձնարարվում վարակի դեպքերի շատ լինելու պատճառով:

- Տղամարդիկ որոնք սեռական հարաբերության մեջ են գտնվում այլ տղամարդկանց հետ:
- Անհատներ, որոնք փողոցային թմրադեղեր են օգտագործում:
- Անհատներ, որոնք ունեն լյարդի խրոնիկական լուրջ հիվանդություն:
- Անհատներ, որոնք դարմանվում են արյունը լերդացնող բաղադրիչների պակասն ամբողջացնող նյութերով:
- Անհատներ, որոնք աշխատում են HAV-ով վարակված կապկանմանների հետ կամ հետազոտական տարալուծարաններում աշխատում են HAV-ով:

Այլ անհատներ կարող են ընդունել Hepatitis-A պատվաստ հատուկ դրություններում.

- Hepatitis A պատվաստ կարող է հանձնարարվել այն երեխաներին կամ չափահասներին, որոնց համայնքում Hepatitis A-ի վարակ է տարածվել:

*Hepatitis A-ի պատվաստ 1 տարեկանից փոքր երեխաներին չի լիազորվում:*

Ե՞ՐԲ

Երեխաների համար առաջին սրսկումը պետք է արվի 12-13 ամսականից: Այն երեխաները, որոնք մինչեւ 2 տարեկանը չեն պատվաստվել, կարող են պատվաստվել հետագա այցելությունների ժամանակ:

Ճամփորդների լավագույն պաշտպանություն ապահովելու համար Hepatitis-A պատվաստների շարքը պետք է սկսել ճամբորդելուց նվազագույնը մեկ ամիս առաջ:

Անհատներ, որոնք պատվաստն ընդունում են ճամփորդելուց մեկ ամիս առաջ կարող են ընդունել նաեւ immune globulin (IG) կոչված սրսկումը: IG-ն տալիս է անմիջական, ժամանակավոր պաշտպանություն:

Ուրիշների համար Hepatitis-A պատվաստների շարքը կարելի է սկսել, երբ անհատը ենթակա է վարակման վտանգին:

Երկարատեւ պաշտպանության համար անհրաժեշտ են պատվաստի երկու դեղաչափեր: Այս դեղաչափերը պետք է տրվեն նվազագույնը 6 ամիս տարբերությամբ:

Hepatitis-A պատվաստը կարելի է ընդունել այլ պատվաստների հետ զուգահեռ:

3

Որոշ մարդիկ չպետք է ընդունեն Hepatitis A պատվաստ կամ պետք է սպասեն

- Որեւէ անհատ որը երբեւէ ունեցել է սուր (լյանքին սպառնացող) գերզգայնական հակազդեցություն նախապես ընդունած Hepatitis-A դեղաչափի նկատմամբ, չպետք է ստանա այլ դեղաչափ:
- Որեւէ անհատ որը երբեւէ ունեցել է սուր (լյանքին սպառնացող) գերզգայնական հակազդեցություն նախապես ընդունած պատվաստի նկատմամբ, չպետք է ստանա պատվաստ: Հայտնեցեք ձեր բժշկին, եթե ունեք որեւէ գերզգայնություն: Բոլոր Hepatitis A պատվաստները պարունակում են պաղլեղ (alum) եւ որոշ Hepatitis A պատվաստներ պարունակում են 2-phenoxyethanol:
- Որեւէ անհատ որը միջին կամ լուրջ հիվանդ է պատվաստի ընդունման ժամանակ հավանաբար պետք է սպասի մինչեւ ապաքինվելը: Հարցրեք ձեր բժշկին կամ բուժքրոջը: Ոչ ծանր հիվանդություն ունեցող մարդիկ սովորաբար կարող են պատվաստ ընդունել:
- Հայտնեցեք ձեր բժշկին, եթե հղի եք: Հղի կանանց կողմից Hepatitis A պատվաստ ընդունելու անվտանգությունը ճշգրտված չէ: Սակայն ապացույց չկա, որ դա վնասակար է հղի կանանց կամ նրանց չծնված երեխաների համար: Վտանգ, եթե նույնիսկ կա, շատ չնչին է:

4

Որո՞ւք են Hepatitis A պատվաստի վտանգները

Պատվաստը, ինչպես որեւէ դեղամիջոց, կարող է հավանաբար լուրջ բարդություններ պատճառել, ինչպես՝ սուր գերզգայնական հակազդեցություն: Hepatitis-A պատվաստի լուրջ վնաս կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

Hepatitis-A պատվաստ ընդունելը ավելի ապահով է, քան հիանդությամբ վարակվելը:

Թեթեւ բարդություններ

- Ցավ պատվաստի մասում (2 չափահասներից շուրջ 1-ի մոտ, եւ 6 երեխաներից մինչեւ 1-ի մոտ)
- Գլխացավ (6 չափահասներից շուրջ 1-ի մոտ, եւ 25 երեխաներից 1-ի մոտ)
- Ախորժակի կորուստ (12 երեխաներից շուրջ 1-ի մոտ)
- Հոգնածություն (14 չափահասներից շուրջ 1-ի մոտ)

Եթե այս բարդությունները առաջանան, նրանք ընդհանրապես տեսում են երեք օր:

Սուր բարդություններ

- Լուրջ գերզգայնական հակազդեցություն, մի քանի ընթացքում (շատ հազվադեպ):

5

Ի՞նչ անել մեղմ կամ միջին հակազդեցության դեպքում

Ինչի՞ն պետք է ուշադրություն դարձնես

- Որեւէ արտասովոր վիճակ, ինչպիսիք են բարձր ջերմություն կամ վարվելակերպի փոփոխություն: Լուրջ հակազդեցության նշանները կարող են ներառել՝ շնչելու դժվարություն, խռպոտ ձայն կամ խզզոց, մաշկի այրոց, գունատություն, թուլություն, սրտի արագ տրոփում կամ գլխապտույտ:

Ի՞նչ պետք է անես

- Չանգահարեք բժշկին կամ հիվանդին շոտափույթ տարեք բժշկի մոտ:
- Հայտնեցեք ձեր բժշկին եղելության մասին, թվականն ու ժամանակը եւ ե՞րբ է տրվել պատվաստը:
- Պահանջեցեք ձեր բժշկից, բուժքրոջից կամ առողջապահական բաժնից, որպեսզի տեղեկացնեն հակազդեցության մասին լրացնելով Vaccine Adverse Event Reporting System-ի (VAERS) ձև:

Կամ դուք ինքներդ կարող եք ներկայացնել այս տեղեկագրությունը VAERS-ի ինտերնետի հասցեի [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov) -ի միջոցով կամ զանգահարելով 1-800-822-7967 համարին:

VAERS-ը բժշկական խորհուրդ չի տալիս:

6

Պատվաստի վնասվածքի հատուցման ազգային ծրագիր

Չեզ կամ ձեր երեխային պատվաստի հետեանքով հասած լուրջ հակազդեցության դեպքում ստեղծված է դաշնակցային ծրագիր՝ օգնելու վճարել տուժվածների խնամքի համար:

Պատվաստի վնասվածքի հատուցման ազգային ծրագրի (National Vaccine Injury Compensation Program) մասին մանրամասնությունների համար զանգահարեք 1-800-338-2382 կամ այցելեք [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation):

7

Ինչպե՞ս կարող եմ իմանալ ավելին

- Հարցրեք ձեր բժշկին կամ բուժքրոջը: Նրանք ձեզ կտան պատվաստումների մասին տեղեկատվական գրքուկի ներդիր կամ կառաջարկեն տեղեկության այլ աղբյուրներ:
- Չանգահարեք ձեր շրջանային կամ նահանգային առողջապահական բաժնին:
- Կապվեցեք Centers for Disease Control and Prevention (CDC)-ի հետ.
  - Չանգահարեք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) համարով
  - Այցելեք CDC-ի website-ը. [www.cdc.gov/hepatitis](http://www.cdc.gov/hepatitis) կամ [www.cdc.gov/nip](http://www.cdc.gov/nip)

